ՀՍԽՀ ԱՐՏԳՈՐԾԺՈՂԿՈՄԱՏԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԲԱԺՆԻ ԲՅՈՒԼԵՏԵՆԸ (1921-1922 ԹԹ.)

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ Հ. Կ.

Բնակչության լայն զանգվածների շրջանում գաղափարաքաղաքական ու մշակութային քարոզչություն իրականացնելու և պետության բոլոր ոլորտներում միակուսակցական դիկտատուրա հաստատելու գործընթացում Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները կարևոր դերակատարություն էին հատկացնում լրատվությանը: Հայաստանի խորհրդայնացումից հետո երկրի նոր իշխանությունները ևս իրենց ձեռնարկումներում առաջնորդվում էին այս գործելաոճով. փակվեցին նախկինում հրատարակվող պարբերականները, և սկսեցին հրատարակվել միայն կոմունիստական ուղղվածություն ունեցող թերթեր ու ամսագրեր:

1920-ական թթ. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՍԽՀ) ժողովրդական կոմիսարիատները բուռն գործունեություն էին իրականացնում՝ կարևոր տեղ հատկացնելով մամուլին: Այսպես՝ Հողագործության ժողկոմատը հրատարակում էր «Գյուղատնտեսական կյանք», Ներքին գործերինը՝ «Վարչակազմակերպչական բաժնի բյուլետեն», Աշխատանքինը՝ «Աշխատանքի տեղեկատու», Առողջապահությանը՝ «Բժշկական հանդես», «Առողջ կենցաղ», «Առողջապահությունը Հայաստանում», Լուսավորությանը՝ «Ժողովրդական լուսավորություն», «Տեղեկագիր» պարբերականները: Գերատեսչական այս լրատվամիջոցների առջև խնդիր էր դրված իրենց վստահված ոլորտների գործունեությունը լուսաբանելուն զուգահեռ ներկայացնել Խորհրդային Հայաստանի քաղաքական ուղղվածությունը, պետության և կոմունիստական կուսակցության վարած քաղաքականությունը:

Գերատեսչական լրատվամիջոցների շարքում առանձնահատուկ տեղ ուներ 1921-1922 թթ. ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի տեղեկատու բաժնի հրատարակած «Բյուլետենը»: Լույս է տեսել պարբերականի 10 համար (առաջինը՝ 1921 թ. հունիսին, վերջինը՝ 1922 թ. մարտին), խմբագիրը և հոդվածների հեղինակները չեն նշվում, սակայն կարելի է ենթադրել, որ այստեղ կարևոր գործ էր կատարում Արտգործժողկոմատի տեղեկատու բաժնի պետ Գեղամ Անտելեպյանը: Պարբերականն արժանի ուշադրության չեն արժանացրել Խորհրդային Հայաստանի լրատվության միջոցների պատմությունն ուսումնասիրող մասնագետները: Նրանք համակողմանի չեն ուսումնասիրել այն, իսկ անդրադառնալիս էլ բավարարվել են սոսկ հիշատակելով կամ լավագույն դեպքում մի քանի պարբերություն են գրել «Բյուլետենի» մասին՝ չփորձելով նույնիսկ պարզել հրատարակված համարների քանակը[1]:

[1] Մասնավորապես տե՛ս Հայոց պարբերական մամուլը. լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794-1934), կազմ. **Լևոնյան Գ.**, Ե., 1934, էջ 113, Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967), կազմ. **Կիրակոսյան Ա.**, Ե., 1970, էջ 345, Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմ. **Բաբլոյան Մ. Ա.**, Ե., 1986, էջ 139, **Ավագյան Ս. Դ.**, Համառոտ ակնարկներ Սովետական Հայաստանի պարբերական մամուլի պատմության (1920- 1930 թթ.), Ե., 1989, էջ 193-194:

Խորհրդային Ռուսաստանի արտգործժողկոմատը ևս հրատարակում էր իր ամսագիրը (”*Бюллетень народного комиссариата иностранных дел РСФСР*”), որի նյութերի հիմնական մասը վերաբերում էր ՌՍՖԽՀ արտաքին քաղաքականության հարցերին և համաշխարհային մամուլի տեսությանը: Սակայն ՀՍԽՀ արտգործժողկոմատի պարբերականում, արտաքին քաղաքական խնդիրներին զուգահեռ, մեծ չափով լուսաբանվում էին նաև Արտգործժողկոմատի գործառույթներին չվերաբերող տարբեր հարցեր (Կարմիր բանակ, գյուղատնտեսություն, կրթամշակութային կյանք և այլն): Ի դեպ, պարբերականի նյութերի մի մասն արտատպված էր «Խորհրդային Հայաստան» թերթի 1921-1922 թթ. համարներից:

«Բյուլետենի» առաջին համարում արդեն հրատարակված էր Ալեքսանդր Մյասնիկյանի գլխավորած ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի առաջին կազմը[2], իսկ պարբերականի տարբեր համարներում ընթերցողները ծանոթանում էին կառավարության անդամների և Հայկոմկուսի ղեկավար գործիչների կյանքի ու գործունեության մանրամասերին[3]: Անդրադարձ էր կատարվում նաև բազմապիսի կուսակցական միջոցառումներին, ինչպես, օրինակ, 1922 թ. հունվարի 26-ին Երևանում գումարված Հայաստանի կոմունիստական կուսակցության համահայաստանյան առաջին համագումարին, քաղվածքներ էին ներկայացվում համագումարում Ս. Լուկաշինի և Ալ. Մյասնիկյանի ելույթներից[4]: «Բյուլե-տենում» տարբեր առիթներով լուսաբանվում էր նաև Պարենավորման, Արտաքին առևտրի, Սոցիալական ապահովության ժողովրդական կոմիսարիատների գործունեությունը, նշվում դրանց ձեռքբերումների և առաջիկա ծրագրերի մասին[5], անդրադարձ էր կատարվում Հայաստանի Կարմիր բանակին առնչվող տարբեր հիմնախնդիրներին, ինչպիսիք էին՝ 1921 թ. հունիս-հուլիսին Զանգեզուրում ծավալված ռազմական գործողությունները, բանակի կողմից չքավոր գյուղացիներին տրամադրվող օգնությունը, Երևանում Կարմիր բանակի հրամանատարական դպրոց բացելու, բանակի վերակազմության և անգրագիտության վերացման հարցերը[6]: Պարբերականում լուսաբանվում են նաև Երևանում 1922 թ. հունվարի 30-ին սկսված՝ Հայաստանի խորհուրդների համահայաստանյան առաջին համագումարի աշխատանքները, քաղվածքներ են բերվում համագումարում ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի և Հանրապետության մյուս ղեկավարների ելույթներից, հրապարակվում են Հայաստանի կենտգործկոմի նորընտիր կազմը, համագումարի անունից

---

[2] Տե՛ս ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի ինֆորմացիոն բաժնի բյուլետեն (այսուհետև՝ Բյուլետեն), 1921, N 1, էջ 1:

[3] Նույն տեղում, 1921, N 2, էջ 13-17, N 3, էջ 13-17, N 4, էջ 14-15, N 7, էջ 28-29, 1922, N 8, էջ 14-15:

[4] Նույն տեղում, 1922, N 10, էջ 1-5:

[5] Նույն տեղում, 1921, N 3, էջ 12, N 4, էջ 8, N 5-6, էջ 4, 9, N 7, էջ 15-16:

[6] Նույն տեղում, 1921, N 3, էջ 1-4, N 4, էջ 8-9, N 5-6, էջ 17-18, N 7, էջ 8-10:

Համառուսական կենտգործկոմի նախագահ Մ. Կալինինին, Հայաստանի Կարմիր բանակին, «Հայաստանի բանվորներին և աշխատավոր մասսաներին», «Տաճկաստանի աշխատավորներին», «գաղութների հայ աշխատավորներին» ուղղված դիմումներն ու կոչերը[7]:

«Բյուլետենում» կարևոր տեղ էր հատկացված Խորհրդային Հայաստանի արտաքին քաղաքականության ու ՀՍԽՀ արտգործժողկոմատի գործունեության լուսաբանմանը: Հանրապետության արտաքին քաղաքական հարցերի առնչությամբ պարբերականում պարզաբանվում է տարբեր երկրներում Խորհրդային Հայաստանի դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների կազմավորման ու գործունեության ընթացքը: 1921 թ. ՀՍԽՀ-ն ներկայացուցիչներ նշանակեց Պարսկաստանում և Թուրքիայում: Թեհրանում Հայաստանի Հանրապետության նախկին ներկայացուցիչ Հովսեփ Արղությանը չէր ցանկանում ներկայացուցչության գործերը հանձնել[8] Պարսկաստանում ՀՍԽՀ ժամանակավոր ներկայացուցիչ նշանակված Ֆ. Ռոտշտեյնին: Ահա թե ինչու «Բյուլետենում» մեծ տեղ է հատկացված «Թեհրանի նախկին ներկայացուցչության լիկվիդացիային», փոխարենը՝ Լևոն Սարգսյանի գլխավորությամբ Թեհրանում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչություն, իսկ Թավրիզում Եզեկիել Երզնկյանի գլխավորությամբ ՀՍԽՀ Ատրպատականի ընդհանուր հյուպատոսություն բացելու աշխատանքներին և վերջիններիս ծավալած գործունեությանը[9]: Պարբերականում ուշադրության է արժանացել նաև Կարսում, Թուրքական արևելյան ռազմաճակատի հրամանատարությանը կից՝ Գևորգ Սարգսյանին Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչ նշանակելու գործընթացը և սկզբնական շրջանում վերջինիս իրականացրած գործունեությունը[10]: Համառոտ կերպով հիշատակելով Խորհրդային Ուկրաինայում և Խորհրդային Թուրքեստանում համապատասխանաբար Հովսեփ Կարախանյանին ու Սմբատ Ղահրամանյանին ՀՍԽՀ ներկայացուցիչներ նշանակելը՝ «Բյուլետենն» այնուհետև անդրադառնում է հայտնի գրականագետ և հասարակական գործիչ Հարություն Սուրխաթյան-Թումանյանին Խորհրդային Վրաստանում ՀՍԽՀ ներկայացուցիչ նշանակելուն, Վլադիկավկազում ՀՍԽՀ ներկայացուցչության աշխատանքներին, որոնց մեջ հիմնականը Հյուսիսային Կովկասում կուտակված հայ գաղթականության կարիքների մասին հոգալն էր[11]: «Բյուլետենում» հրապարակվել են ՀՍԽՀ արտգործժողկոմատի՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությանը (Կարսում գումարվելիք կոնֆերանսի առնչությամբ) և Թուր-

---

[7] Նույն տեղում, 1922, N 10, էջ 5-27:

[8] Հայաստանի Հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 6-ի հրամանի համաձայն, 1920 թ. նոյեմբերի 29-ից դադարեցված էին հայտարարվում նախկին կառավարության դիվանագիտական ներկայացուցչությունների ու արտասահմանյան առաքելությունների լիազորությունները (տե՛ս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 1960, էջ 419):

[9] Տե՛ս Բյուլետեն, 1921, N 3, էջ 11-12, N 5-6, էջ 23, N 7, էջ 27-28, 1922, N 9, էջ 1-3, N 10, էջ 31:

[10] Նույն տեղում, 1921, N 3, էջ 12, N 5-6, էջ 21, 26-28, N 7, էջ 1-8:

[11] Նույն տեղում, 1921, N 3, էջ 11, 1922, N 8, էջ 14-15, N 9, էջ 3:

քական արևելյան ռազմաճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին (թուրքական գերության մեջ գտնվող հայ ռազմագերիների վիճակի և Արդվինի հայության տարագրության վերաբերյալ), արևմտաեվրոպական երկրներին ուղղված ՀՍԽՀ հայտագրերը. Միջագետքի հայ գաղթականության ծանր վիճակի առնչությամբ Անգլիային, ինչպես նաև Դաշնակիցների ոստիկանության կողմից Կ. Պոլսում Խորհրդային Հայաստանի տնտեսական ներկայացուցիչներին խուզարկելու և վերջիններիս մոտ գտնվող գումարներն ու իրերն առգրավելու առիթով Անգլիայի, Իտալիայի և Ֆրանսիայի արտգործնախարարներին ուղղված հուշագրերը[12]:

1920-ական թթ. առաջին կեսին խորհրդահայ մամուլում առանձնահատուկ տեղ էր գրավում հակախորհրդային ուժերի և առանձնապես ՀՅ Դաշնակցության դեմ տարվող գաղափարաքարոզչական պայքարը: Այս խնդիրը դուրս չի մնացել նաև «Բյուլետենի» ուշադրությունից, որտեղ ընդարձակ անդրադարձներ կան ՀՅ Դաշնակցության գործունեության տարբեր դրվագներին: Հրատարակված նյութերի գերակշիռ մասը, տեղեկատվականից բացի, ունի նաև գաղափարաքարոզչական ուղղվածություն. ՀՅԴ-ն առավելապես քննադատվում ու տարբեր մեղադրանքների է արժանանում 1921 թ. փետրվարյան ապստամբության շրջանում Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության հետ համագործակցելուն ուղղված՝ Սիմոն Վրացյանի գլխավորած Հայրենիքի փրկության կոմիտեի գործողությունների, ապրիլի 2-ին Երևանից նահանջելիս պետական գանձարանում պահվող ոսկին և դրամները տանելու, 1921 թ. հունիսի 15-ին խորհրդային Դարալագյազի վրա դաշնակցական գործիչների ղեկավարությամբ զանգեզուրյան ուժերի հարձակման, Զանգեզուրում հակախորհրդային պայքար կազմակերպելու, ապա մի քանի տասնյակ կոմունիստ գործիչների՝ 1921 թ. ապրիլի 21-ին գնդակահարելու և Տաթևի ժայռից ցած նետելու, Պարսկաստան անցնելուց հետո այնտեղ դաշնակցականների ծավալած բուռն հակախորհրդային գործունեության համար[13]: Այս գործողությունները միտված էին կազմակերպական առումով ՀՅԴ-ն կազմալուծելուն զուգահեռ նաև գաղափարական տեսակետից Հայաստանում ջախջախել նախկին կառավարող կուսակցությունը, ինչը և տվեց իր որոշակի արդյունքները:

Պարբերականում մեծ տեղ էր հատկացված Խորհրդային Հայաստանի սոցիալտնտեսական կացության, քաղաքականության և ՀՍԽՀ-ին տրամադրվող արտաքին օգնության խնդիրների լուսաբանմանը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ պետությունը գտնվում էր տնտեսական ճգնաժամի մեջ, իսկ երկրի իշխանություններն առաջնահերթ ուշադրություն էին դարձնում այս հարցերին[14]: «Բյուլետենի» տարբեր համարներում անդրադարձ է կատարվում ինչպես Խորհրդային Հայաստանի ներքին և արտաքին տնտեսական քաղաքականության իրականացման

[12] Նույն տեղում, 1921, N 5-6, էջ 26-28, N 7, էջ 18-19, 1922, N 8, էջ 6-7:

[13] Նույն տեղում, 1921, N 1, էջ 6, 11-12, N 2, էջ 11-12, N 3, էջ 4-7, N 4, էջ 7, N 5-6, էջ 24-26, 40, 1922, N 9, էջ 7-9, N 10, էջ 30-31:

[14] Այս մասին մանրամասն տե՛ս **Ղազախեցյան Վ. Ն.**, Հայաստանը 1920-1940 թթ., Ե., 2007, էջ 263-273:

սկզբունքներին ու նպատակադրումներին (այդ թվում՝ Անդրկովկասի երեք խորհրդային հանրապետությունների տնտեսական համագործակցությանը), այնպես էլ Պարսկաստանի և Թուրքիայի հետ առևտրատնտեսական համագործակցության հարցերին[15]: Պարբերականում տեղ էր հատկացված նաև սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ գտնվող Խորհրդային Հայաստանին խորհրդային մյուս հանրապետություններից և արտասահմանի հայկական գաղթավայրերից տրամադրվող օգնությանը: Ուշադրությունից դուրս չեն մնացել նաև ՀՍԽՀ ներքին կյանքին առնչվող այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք էին Լոռիի և Զանգեզուրի պղնձահանքերի շահագործումը, Հայկոոպի՝ տարբեր ուղղություններով իրականացվող լայնածավալ գործունեությունը, երկրում տարածում ստացած խոլերայի և սովի դեմ իշխանությունների կազմակերպած պայքարը և այլն[16]: Այնուհետև «Բյուլետենում» ներկայացված են հանրապետության բնակչությանն օգնելու և երկրի տնտեսական վերաշինությանն օժանդակելու նպատակով ՀՍԽՀ ժողկոմխորհի կողմից Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) ստեղծման աշխատանքները: Անդրադարձ է կատարվել ՀՕԿ-ի կարգավիճակին, կառուցվածքին, գործունեության սկզբունքներին ու ձևերին, հրապարակվել է նաև ՀՕԿ-ի դիմումն արտասահմանի հայերին, որտեղ կոչ էր արվում օգնություն ցուցաբերել հայրենիքի վերաշինության գործին և այլն[17]:

Հայաստանի խորհրդային իշխանությունները հատկապես 1921 թ. փետրվարյան ապստամբության պարտությունից հետո առանձնահատուկ ուշադրություն էին հատկացնում արևմտահայ գաղթականներին, քանի որ վերջիններս ակտիվորեն մասնակցել էին հակախորհրդային շարժմա-նը[18]: Այս առիթով «Բյուլետենում» լուսաբանված են Թիֆլիսի արևմտա-հայերի կոնֆերանսը, Խորհրդային Հայաստանում բնակվող արևմտահայերի համագումարները, միտինգներն ու կոնֆերանսները, որոնք ավարտվում էին խորհրդային իրավակարգի նկատմամբ արևմտահայերի համակրանքն արտահայտող բանաձևերի ընդունմամբ: Այնուհետև անդրադարձ է կատարվում Խորհրդային Հայաստանում ապաստանած գաղթականներին պետության և հայկական գաղթավայրերի կողմից տրամադրվող օգնության խնդիրներին, ներկայացվում են Միջագետքում կենտրոնացած տասնյակ հազարավոր հայ գաղթականների վիճակը և այլ հարցեր[19]: Գաղթականության հարցի առնչությամբ «Բյուլետենի» ուշադրությունից չի վրիպել Մերձավոր Արևելքում ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) իրականացրած գործունեությունը, որի շնորհիվ սովի ճիրաններից փրկվեցին տասնյակ հազարավոր հայ որբեր: Պարբերականն անդրադարձել է նաև ՀՍԽՀ ղեկավարների հետ ամերիկյան կազմակերպության ներկայացուցիչների հանդիպումներին ու բանակցությունն-

---

[15] Բյուլետեն, 1921, N 1, էջ 3, N 2, էջ 1-6, N 4, էջ 7-8, 1922, N 8, էջ 9:

[16] Նույն տեղում, 1921, N 1, էջ 2, N 3, էջ 9-11, 13, N 5-6, էջ 3-4, 9-10, 24, N 7, էջ 13-14, 20, 1922, N 8, էջ 7-10, 13-14, N 10, էջ 29-32:

[17] Նույն տեղում, 1921, N 5-6, էջ 28-36, 1922, N 9, էջ 7:

[18] Տե՛ս Կոմունիստ (Երևան), 17. IV. 1921:

[19] Բյուլետեն, 1921, N 2, էջ 9-11, N 3, էջ 9, N 4, էջ 2-3, N 5-6, էջ 10-14, 22, N 7, էջ 14-15, 17-18, 1922, N 9, էջ 5-7, 11-12:

ին[20]: Թվարկված հիմնախնդիրներին զուգահեռ՝ «Բյուլետենում» լայնորեն լուսաբանվում են նաև հողային հարցին ու գյուղատնտեսությանն առնչվող ամենատարբեր հիմնահարցեր, ինչպես պարենային տուրքի խնդիրը, պարենային տուրքի մասին դեկրետին գյուղացիության վերաբերմունքը: Գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ երկրի իշխանությունների ձեռնարկած քայլերի առնչությամբ արժևորվում են ՀՍԽՀ ժողկոմխորհի և Հողագործության ժողկոմատի՝ հողային խնդրի կարգավորմանն ուղղված գործողությունները՝ աղքատ գյուղացիներին նպաստ, սերմացու, աշխատանքային գործիքներ տրամադրելու, քայքայման եզրին գտնվող այգեգործության, բամբակագործության, ծխախոտագործության, շերամապահության, մեղվաբուծության, անասնապահության զարգացման ուղղությամբ կատարված աշխատանքները[21]: Նոր տնտեսական քաղաքականության ընթացքում իրականացվող ձեռնարկումների շնորհիվ Խորհրդային Հայաստանի գյուղացիությունը հնարավորություն ստացավ բարելավելու իր սոցիալական դրությունը: Սակայն խորհրդային իշխանությունների այս քաղաքական ուղեգիծը երկար չշարունակվեց:

Խորհրդային Հայաստանի իշխանությունները 1920-ական թթ. կարևոր տեղ էին հատկացնում մշակութային և գիտակրթական հարցերին, ինչն իր արտացոլումն էր գտնում նաև մամուլում: Բացառություն չէր նաև «Բյուլետենը»: Պարբերականի տարբեր համարներ անդրադառնում էին պետության կողմից խնդրո առարկա ոլորտի զարգացմանն ուղղված գործողություններին, նորաբաց կրթական հաստատությունների (պետական համալսարան, տարբեր մասնագիտացված դպրոցներ) գործունեությանը, Հանրապետության տարածքում անգրագիտության դեմ կազմակերպվող պայքարի հարցերին, Հայաստանի գիտական ինստիտուտի, թանգարանների և մշակութային տարբեր հաստատությունների գործունեությանը[22]:

«Բյուլետենի» տարբեր համարներում լուսաբանվում էին նաև Հայաստանի արհեստակցական միությունների գործունեությունը, տարբեր արհմիութենական համագումարները[23], Հանրապետությունում ծավալված երիտասարդական շարժման հարցերը, Հայաստանի երիտասարդական կոմունիստական միության առաջին համագումարի աշխատանքները, պարզաբանվում էր պետության տնտեսական վերաշինության ասպարեզում իշխանությունների կողմից երիտասարդությանը հատկացված դերը[24]: Խորհրդային Հայաստանի տարածքային խնդիրների առնչությամբ պարբերականում թռուցիկ անդրադարձներ կային Լեռնային Ղարաբաղն

[20] Նույն տեղում, 1921, N 1, էջ 9, N 3, էջ 3-4, N 4, էջ 8-9, N 7, էջ 8-10: Խորհրդային Հայաստանում Ամերկոմի գործունեության մասին տե՛ս **Ավետիսյան Ս.,** Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի որբախնամ գործունեությունը Խորհրդային Հայաստանում (Բանբեր Հայաստանի արխիվների, 2006, N 1, էջ 89-99):

[21] Բյուլետեն, 1921, N 3, էջ 10, N 5-6, էջ 2-3, 1922, N 8, էջ 8-10, N 9, էջ 15-19:

[22] Նույն տեղում, 1921, N 3, էջ 12-13, N 4, էջ 10-12, N 5-6, էջ 18-20, N 7, էջ 21-25, 1922, N 8, էջ 11-14, N 9, էջ 14:

[23] Նույն տեղում, 1921, N 1, էջ 5, N 4, էջ 10, N 5-6, էջ 1-2, 7, N 7, էջ 20, 1922, N 9, էջ 14-15:

[24] Նույն տեղում, 1921, N 5-6, էջ 14-16:

ու Զանգեզուրը ՀՍԽՀ-ին միացնելուն ուղղված Հանրապետության իշխանությունների գործողություններին, հրապարակվել է 1921 թ. նոյեմբերի 6-ին Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի և Վրաստանի հեղկոմի նախագահ Բ. Մդիվանու կողմից երկու երկրների միջպետական սահմանագծի վերաբերյալ Թիֆլիսում ստորագրված որոշումը[25]: Ներկայացնելով Անդրկովկասի խորհրդային հանրապետությունները դաշնային կապերով իրար միացնելու անհրաժեշտությունն ու առավելությունները՝ Անդրդաշնության կազմավորմանն ուղղված գործողությունների առնչությամբ «Բյուլետենը» հրապարակել է «Կովկասյան հանձնաժողովի մշակած դաշնադրության նախագիծը» և «Անդրկովկասի սոցիալիստական խորհրդային հանրապետությունների ֆեդերատիվ պայմանագրի նախագիծը»[26], որոնցում նախանշվում էին նոր ստեղծվող Դաշնության խնդիրները, կառուցվածքն ու գործառույթները: Պարբերականում հրատարակված են նաև ամենատարբեր նյութեր՝ ՀՍԽՀ ժողկոմխորհի տարբեր դեկրետներ, որոշումներ, շրջաբերականներ, սփյուռքի հայկական մամուլի տեսություններ, առանձին կոչեր, հայտարարություններ, լրատվություններ: Այդ ամենը, հանրությանը հուզող զանազան հարցերի մասին տեղեկացնելուց բացի, նպատակ էր հետապնդում հիմնավորել և քարոզել Հայաստանի խորհրդային իշխանությունների առաջին ձեռնարկումներն ու ծրագրերը:

Այսպիսով՝ ՀՍԽՀ արտգործժողկոմատի տեղեկատու բաժնի հրատարակած «Բյուլետենը», արտաքին քաղաքականությանն առնչվող հարցերին անդրադառնալուն զուգահեռ, բացահայտում էր նաև այլ ոլորտներում Խորհրդային Հայաստանի ձեռքբերումներն ու առկա խնդիրները՝ միաժամանակ կատարելով խորհրդային գաղափարների քարոզչություն, ինչը բնորոշ էր ժամանակի մամուլին:

БЮЛЛЕТЕНЬ ИНФОРМАЦИОННОГО ОТДЕЛА НАРКОМИНДЕЛА ССРА (1921-1922 гг.)

СУКИАСЯН А. К.

Резюме

Многие народные комиссариаты Советской Армении в 1920-ых годах имели свои ведомственные издания. Последние остались вне поля внимания специалистов, занимающихся историей периодической печати Советской Армении. “Бюллетень” информационного отдела народного комиссариата иностранных дел ССРА в 1921-1922 гг. освещал как вопросы внешней политики Советской Армении, так и проблемы других сфер (образовательно-культурной жизни, сельского хозяйства, профсоюзов и т. д.).

[25] Նույն տեղում, 1921, N 1, էջ 8-11, N 3, էջ 4, 9, N 4, էջ 4-6, 1922, N 8, էջ 7:
[26] Նույն տեղում, 1922, N 8, էջ 1-3, N 10, էջ 27-29: